ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/71

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացուցիչ՝

Դ. Շատվերյանի (լիազորագիր տրված՝ 21.08.2019թ.)

Քննելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Զանգված»

ՍՊԸ-ի կողմից 03.10.2019թ. ներկայացված և 04.10.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/71 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Զանգված» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Զանգված» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 03.10.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվել է հրավեր՝ ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման ընթացակարգի առարկայով:
2. «Զանգված» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտ:
3. Հայտերի բացումից, հավասար գնային առաջարկների բանակցությունների ավարտից հետո 23.09.2019թ. 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է հայտարարվել գնային առաջարկով «Զանգված» ՍՊԸ-ն և առաջարկվել է ներկայացնել հրավերով սահմանված փաստաթղթերը, որոնք ներկայացվել են սահմանված ժամկետում. ըստ Հանձնաժողովի շտկումից հետո փորձառության մասով առկա են եղել անհամապատասխանություններ:
4. Ընկերության կողմից որպես նախկինում կատարված աշխատանք ներկայացվել են կնքված և կատարված /աշխատանքը ընդունված/ պետական կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար պայմանագրեր՝ ՀՀ ՊՆ-ի հետ 18.05.2016թ. կնքված թիվ ՍԸԱՇՁԲ-10/5-1 պայմանագիրը 23 150 000 ՀՀ դրամի չափով և ՀՀ ոստիկանության հետ 13.12.2017թ. կնքված թիվ ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՇՁԲ-2017-ՆԱԽ14 պայմանագիրը՝ 7 400 000 ՀՀ դրամի չափով:
5. 23.09.2019թ. Պատվիրատուի կողմից կազմվել է թիվ 3-3 արձանագրությունը, որով մերժել է Ընկերության հայտը:
6. Մերժման հիմքում նշվել է Պատվիրատուի գնահատմամբ հետևյալ անհամապատասխանությունները՝
   - ՔՆ-ՊԸՁԲ-16/17 և ՓՆՄԱՇՁԲ-10/11-3 ծածկագրերով պայմանագրերի մասով. «նշված չէ թե հրավերով պահանջվող լիցենզիաների /նախկինում կատարված

պայմանագրերի մասով/ շրջանակներում, որ աշխատանքներն է իրականացրել մասնակիցը, ուստի այն հնարավոր չէ գնահատել» ինչպես նաև «... չի ներկայացվել նախագծանախահաշվային փաստաթղթերի դրական փորձաքննության վերաբերյալ հավաստող փաստաթուղթը»:

- Նշված պայմանագրերը չեն բավարարում հրավերի 2.5 կետով սահմանված նմանատիպ համարվող օբյեկտների պահանջներին և չեն հանդիսանում նմանատիպ:

7. Կատարված պայմանագրերը կատարվել են մինչև կարգում փոփոխություն կատարելը տրված լիցենզիային համապատասխան, ըստ որի բոլոր աշխատանքների համար տրվել է միայն դա, այսինքն՝ 1 լիցենզիա:

Ընկերությունը վկայակոչել է բողոքի հետևյալ իրավական հիմքերը և հիմնավորումները.

Ընկերությունը գտնում է, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետի համաձայն.

«1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար,....գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:

Նշված նորմերից հետևում է, որ գնում կատարելու նպատակով մրցույթ հայտարարելու դեպքում այն պետք է իրականացվի Պատվիրատուի կողմից այնպես, որ պահպանվեն

մրցակցային ոչ խտրական հիմունքներով մրցույթի անցկացման պայմանները և ապահովվեն թափանցիկությունը, արդյունավետությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ մասերի համաձայն.

«5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված»:

2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 46-րդ, 65-րդ կետերի համաձայն՝

46. Սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից»:

Ընկերությունը անհամապատասխանությունների մասով արձանագրել է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «1. Պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը»:

Սույն գործով Պատվիրատուն գնահատել է ներկայացված փաստաթղթերը և որպես հայտի մերժման հիմք նշվել է, որ նմանատիպ պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար չի ներկայացվել փորձաքննության վերաբերյալ հավաստող փաստաթուղթը:

Տվյալ դեպքում անհիմն է Պատվիրատուի նշվածը, վերջինս դրսևորել է ոչ իրավաչափ, խտրական և ոչ մրցակցային «վարքագիծ», քանի որ ներկայացվել է պետական պայմանագրեր, որոնք պատշաճ կատարվել են և որոնց պատշաճ կատարված լինելը

հավաստվել է կատարված աշխատանքների ընդունմամբ, իսկ թերությունների առկայության վերաբերյալ առկա չէ որևէ փաստ: Նշվածի հիման վրա պատշաճ կատարմամբ հիշյալ պայմանագրերով պարտավորությունը դադարել է: Այլ կերպ. ներկայացվել է պայմանագրեր, որոնք պատշաճ կատարվել և հանձնվել են: Հետևաբար սույն պարագայում Պատվիրատուն իրավունք չունի ենթադրություններ անել կատարված աշխատանքի պատշաճ չլինելու վերաբերյալ:

Ընկերությունը նշել է, որ նման պնդումն անհիմն է, քանի որ ներկայացված պայմանագրերում, օրինակ ՀՀ ՊՆ-ի հետ 18.05.2016թ. կնքված թիվ ՍԸԱՇՁԲ-10/5-1 պայմանագրում՝ ապրաքների տեխնիկական բնութագրում մանրամասն նշված է կատարված աշխատանքները, մասնավորապես. ինժիներաերկաբանական եզրակացություն, ճարտարապետական և կոնստրուկտիվ լուծումների գծագրեր, էլեկտրոսնուցման և էլեկտրոլուսավորության գծագրեր, ջերմատեխնիկական, օդափոխության, ջրամատակարարման և կոյուղու գծագրեր, շինարարության կազմակերպման նախագիծ: Նշված աշխատանքները համաձայն 07.06.2016 թվականի հանձնման-ընդունման ակտի ընդունվել են և արձանագրվել է դրանց պատշաճ լինելը, ինչպես նաև առկա է դուրս գրված հաշիվ-ապրանքագիր և վճարում:

Նույնը վերաբերում է մյուս պայմանագրին, ըստ որի կատարման 04.07.2018թ. թիվ 1 արձանագրությամբ հստակ նշված է կատարված աշխատանքների ծավալները:

Ընկերությունը հայտնել է, որ առաջին անգամ ներկայացված պայմանագրերը ամբողջությամբ հանդիսանում են պատշաճ և հրավերին համապատասխանող փաստաթղթեր:

Ընկերությունը նշել է, որ բացի այդ ի վերջո եթե առկա է համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորություն, ապա պայմանագրերի վերաբերյալ առկա տարբերությունը պետք է մեկնբանվի հօգուտ մասնակցի՝ բողոքաբերի:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝

1. Հրավերը պետք է պարունակի՝

1) հղում հրապարակված հայտարարությանը՝ ի լրումն որի տրամադրվում է հրավերը.

2) մրցույթի ծածկագիրը.

3) հայտերի պատրաստման հրահանգները.

4) որակավորման չափանիշները, մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատման կարգը.

5) գնման առարկայի բնութագրերը.

6) հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրության կարգը.

Ընկերությունը նշել է, որ տվյալ դեպքում մրցույթի հրավերով սահմանվել են խտրական և ոչ մրցակցային պայմաններ, նշվել են այնպիսի պայմաններ, որը սահմանափակում է մասնակիցների մասնակցությունը: Հետևաբար եթե բողոքներ քննող անձը գտնի, որ չի ներկայացվել հրավերով սահմանված պայմանագրեր, որպիսի դիրքորոշումը չի կարող իրավաչափ լինել, ապա պետք է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, քանի որ բողոքաբերը պայմանագրերը կատարել է նախկինում՝ մինչև «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ 2017 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-236-Ն օրենքն ուժի մեջ մտնելը տրված լիցենզիայի շրջանակներում, որը ուժի մեջ է իսկ դրա շրջանակներում կատարվածը հանդիսանում է նմանատիպ պայմանագրեր: Իսկ այլ պայմաններ սահմանելը ակնհայտ է, որը հանդիսանում է մասնակցի մասնակցության անհիմն սահմանափակում:

Այսպիսով, Պատվիրատուն սահմանափակված լինելով օրենքով և ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված ժամկետներով, սահմանված ընթացակարգով, չի պահպանել դրանք, որի արդյունքում պետք է վերջինիս պարտավորեցնել հայտարարել Ընկերությանը ընտրված մասնակից:

Ընկերությունը ներկայացված բողոքով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1.Պարտավորեցնել պատվիրատուին կայացնել որոշում մրցույթի ընտրված մասնակից ճանաչել «Զանգված» ՍՊԸ-ին կամ

2.Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին կայացնել որոշում ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարել:

Ի լրումն բողոքի Ընկերությունը խնդրել է՝

1. պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին դադարեցնել ՀՀՔԿ -ԳՀԱՇՁԲ-19/13 ծածկագրով մրցույթում «Զանգված» ՍՊԸ-ի հայտը մերժելու 23.09.2019 թվականի թիվ 3-2 արձանագրությունը և կայացնել որոշում «Զանգված» ՍՊԸ-ին ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 ծածկագրով մրցույթի ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

2. կամ մերժելու դեպքում պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին կայացնել որոշում ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարել:

«Զանգված» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 11.10.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Ընկերության կողմից ներկայացված բողոքում առկա են մի շարք սխալներ, մասնավորապես՝

1. բողոքը ներկայացվել է ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ, սակայն բողոքի III մասի 1-ին կետով Ընկերությունը խնդրում է պարտավորեցնել պատվիրատուին ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10 ծածկագրով մրցույթի ընտրված մասնակից ճանաչել Ընկերությանը, իսկ 2-րդ կետով՝ պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարել:

Անհասկանալի է, թե բողոքն ու՞մ կայացրած որոշման դեմ է՝ պատվիրատուի՞, թե՞ գնահատող հանձնաժողովի, ո՞ր ծածկագրով ընթացակարգին է վերաբերում՝ ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13, թե՞ ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10 և վերջապես՝ Ընկերությունն ուզում է որ իրեն հաղթող ճանաչե՞ն, թե՞ ընթացակարգը չկայացած հայտարարվի:

2.Բողոքի I մասի 5-րդ կետում նշված 2019 թվականի սեպտեմբերի 23-ին գնահատող հանձնաժողովի (ոչ թե պատվիրատուի) կողմից ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ N 3-3 արձանագրություն ընդհանրապես չի կազմվել,

3. բողոքի I մասի 6-րդ կետում նշված պայմանագրերը ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 ծածկագրով ընթացակարգի ընթացքում չեն ներկայացվել, ուստի գնահատող

հանձնաժողովը չէր կարող դրանց վերաբերյալ որևէ գնահատական տալ և կազմել գոյություն չունեցող N 3-3 արձանագրությունը:

Ինչ վերաբերում է Ընկերության հայտը մերժելուն՝ հրավերի 2.5 կետով սահմանված պահանջներին չբավարարելու հիմքով, ապա տեղեկացնում եմ, որ հրավերի 2.5 կետով հստակ և առանց երկակի մեկնաբանության սահմանված է եղել նմանատիպ համարվող պայմանագրի (երի) պահանջը՝ սահմանված լիցենզիայի և ներդիրների շրջանակներում նախկինում կատարված պայմանագրերը, որոնք են.

բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող հատուկ և կարևորագույն նշանակության (այդ թվում՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության) օբյեկտի (ների) ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի նախագծման աշխատանքներ կամ բարձրագույն ռիսկայնության (V կատեգորիայի) աստիճանի՝ հատկապես վտանգավոր ու տեխնիկապես բարդ, օբյեկտի (ների) ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի նախագծման աշխատանքներ.

մասնավորապես.

կառուցման և/կամ վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և փորձաքննության դրական եզրակացության ստացում

ա. հանրակրթական դպրոցների (տարրական, միջին, հիմնական, ավագ, վարժարան և միջնակարգ դպրոց), հատուկ հանրակրթական դպրոցների, արտադպրոցական կրթադաստիարակչական և նախադպրոցական ուսումնական հաստատությունների,

բ. երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների, տարեցների և հաշմանդամների տուն-ինտերնատների,

գ. պոլիկլինիկաների, առողջության պահպանման կենտրոնների, ամբուլատորիաների, հիվանդանոցների, ծննդատների, հոսպիսների,

դ. միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների,

ե. գիտական, գիտահետազոտական, նախագծային կազմակերպությունների, բանկերի, գրասենյակների և այլ վարչական օբյեկտների՝ 200 և ավելի աշխատատեղով,

զ. հյուրանոցային տնտեսության օբյեկտների՝ 200 և ավելի տեղով,

է. մշակույթի կենտրոնների, թատրոնների, կրկեսների, կինոթատրոնների, համերգասրահների՝ դահլիճի 300 և ավելի նստատեղով,

ը. հատկապես վտանգավոր և (կամ) տեխնիկապես բարդ, ինչպես նաև երկու և ավելի պետությունների շահերին առնչվող քաղաքաշինական (այդ թվում՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ նշանակության) օբյեկտների:

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված IV գլխի (շինարարական օբյեկտների դասակարգումը) 26-րդ կետը՝ շինարարական օբյեկտները, ելնելով դրանց ծավալից, նշանակությունից, կարևորությունից, բարդությունից, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի վրա անվտանգությունից, դասակարգվում են ռիսկայնության աստիճանի 5 կատեգորիաների:

Նույն գլխի 27-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է, որ բարձր ռիսկայնության աստիճանի (4-րդ կատեգորիա) օբյեկտների թվին են դասվում հատուկ և կարևորագույն նշանակություն ունեցող շինարարական օբյեկտները:

Նույն որոշման Հավելված 4-ով սահմանված է շինարարական օբյեկտների ցանկը, ըստ ռիսկայնության աստիճանի (կատեգորիաների):

Նշված հավելվածի 3-րդ ցանկում սահմանված են 4-րդ կատեգորիայի բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտները:

Նշված ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետով (Հասարակական շենքեր և շինություններ) սահմանված ցանկից պատասխանատու ստորաբաժանումն առանձնացրել է տվյալ գնման առարկա հանդիսացող շինարարական օբյեկտին բնույթով, նշանակությամբ և դասակարգման այլ չափանիշներով համանման օբյեկտների ցանկը, որը հստակ է և առանց երկակի մեկնաբանության արտացոլված է հրավերի պահանջում, իսկ Ընկերության կողմից ներկայացված համանման պայմանագրերը չեն համարվում հրավերի պահանջներին համապատասխան, ինչի մասին նշված է գնահատող հանձնաժողովի կողմից կազմված 2019 թվականի սեպտեմբերի 17-ի N 3-1 և 2019 թվականի սեպտեմբերի 23-ի N 3-2 արձանագրություններում:

Պատվիրատուն նշել է, որ հրավերով սահմանված պահանջները չեն սահմանափակում գնման գործընթացի մասնակցների իրավունքները: Նմանատիպ համարվող օբյեկտների նախագծեր մշակվել և մշակվում են բազմաթիվ ընկերությունների կողմից, ինչի մասին վկայում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից նմանատիպ այլ օբյեկտների նախագծերի ձեռքբերման համար կազմակերպված գնման գործընթացներին

կազմակերպությունների մասնակցությունը և հրավերով սահմանված պահանջներին բավարարող հայտերի ներկայացումը:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից հրավերում նշված պահանջը միտված է գնման գործընթացի առարկա համարվող աշխատանքի պատշաճ որակով և սահմանված ժամկետնում կատարմանը՝ հաշվի առնելով մասնակցի նմանատիպ օբյեկտի (ների) նախագծերի մշակման փորձառությունը՝ արդյունքում պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի ռիսկերի նվազեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերության բողոքն անհիմն է (որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին) և ենթակա է մերժման:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 11.10.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/71 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2019/71 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Զանգված» ՍՊԸ-ն:

2. «Զանգված» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմում է 28 000 000 ՀՀ դրամ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաղթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.09.2019թ. նիստի թիվ 3-1 արձանագրությամբ Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք շտկելու անհրաժեշտության վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Կարգի 47-րդ կետի համաձայն:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.09.2019թ. թիվ 3-2 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը «Մասնագիտական փորձառության» մասով չի համապատասխանում Հրավերի 2.5 կետով սահմանված պահանջներին:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Զանգված» ՍՊԸ-ի 03.10.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ի լրումն բողոքի ներկայացված գրությունները, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի դիրքորոշումը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: **Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:**

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին

ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ

պայմանագիր, պայմանով, որ գնահատող հանձնաժողովը կարող է սույն կետի 2-րդ ենթակետի հիման վրա ներկայացված պայմանագրի (համաձայնագրերի, պայմանագրերի) կատարված լինելու իսկությունը ստուգել կոմիտեի միջոցով: Նախկինում կատարված պայմանագիրը (պայմանագրերը) գնահատվում է (գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ յոթանասուն տոկոսից: Ընդ որում, առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ երեսունհինգ տոկոսից.

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (համաձայնագրերի, պայմանագրերի) պատճենները, իսկ դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի (համաձայնագրի)՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3)….

4) **<u>մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները</u>**:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության

հնարավորության: Ճանապարհաշինարարական աշխատանքների՝ ներառյալ դրանց իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների դեպքում տնտեսական գործունեության խմբերը սահմանվում են՝ հաշվի առնելով գնման առարկայի տեսակը, իսկ շինարարական ծրագրերի դեպքում՝ հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի 2-րդ կետի 2.5 կետի համաձայն՝ մասնակցին ներկայացվող «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայ-տությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում ներքոհիշյալ լիցենզիայի և ներդիրների շրջանակներում նախկինում կատարված պայմանագրերը,

I. մինչև «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-236-Ն օրենքն ուժի մեջ մտնելը ձեռքբերված.

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ

- «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)»

և միևնույն ժամանակ նույն լիցենզիայի անբաժանելի մաս հանդիսացող համապատասխան ոլորտի աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձանց

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ

(աշխատանքների առանձին տեսակների համար)

- բնակելի, հասարակական և արտադրական
- հիդրոտեխնիկական
- էներգետիկ
- կապի

կամ

II.«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-236-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո և ՀՀ կառավարության 27.12.2018թ. N1533-Ն որոշման հիման վրա ձեռքբերված.

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ

- «Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)»

և նույն լիցենզիայի անբաժանելի մաս հանդիսացող համապատասխան ոլորտի աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձանց

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ

- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր
- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր

- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր

-էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր

- Էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէներգետիկական համակարգեր

- կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր.

որոնցից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում՝ գնային առաջարկի առնվազն 20%-ի չափով, կատարվել են ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշմամբ սահմանված

1.Բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող հատուկ և կարևորագույն նշանակության (այդ թվում՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության) օբյեկտի (-ների) ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի նախագծման աշխատանքներ

Կամ

2.բարձրագույն ռիսկայնության (V կատեգորիայի) աստիճանի՝ հատկապես վտանգավոր ու տեխնիկապես բարդ, օբյեկտի (-ների) ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի նախագծման աշխատանքներ

Մասնավորապես.

Կառուցման և/կամ վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումը և փորձաքննության դրական եզրակացության ստացումը

- հանրակրթական դպրոցները (տարրական, միջին, հիմնական, ավագ, վարժարան և միջնակարգ դպրոց), հատուկ հանրակրթական դպրոցները, արտադպրոցական կրթադաստիարակչական և նախադպրոցական ուսումնական հաստատությունները և դրանց կառուցման և/կամ ամբողջական վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումը և մշակման արդյունքում համապատասխան փորձաքննության դրական եզրակացության առկայությունը:

- երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, տարեցների և հաշմանդամների տուն-ինտերնատներ,
- պոլիկլինիկաներ, առողջության պահպանման կենտրոններ, ամբուլատորիաներ, հիվանդանոցներ, ծննդատներ, հոսպիսներ,
- միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ,
- գիտական, գիտահետազոտական, նախագծային կազմակերպություններ, բանկեր, գրասենյակներ և այլ վարչական օբյեկտներ՝ 200 և ավելի աշխատատեղով
- հյուրանոցային տնտեսության օբյեկտների՝ 200 և ավելի տեղով,
- մշակույթի կենտրոնների, թատրոնների, կրկեսների, կինոթատրոնների, համերգասրահների՝ դահլիճի 300 և ավելի նստատեղով,
- հատկապես վտանգավոր և (կամ) տեխնիկապես բարդ, ինչպես նաև երկու և ավելի պետությունների շահերին առնչվող քաղաքաշինական (այդ թվում՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ նշանակության) օբյեկտների:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Զանգված» ՍՊԸ-ն:

«Զանգված» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմում է 28 000 000 ՀՀ դրամ:

Ընկերությունը հայտի թիվ 1 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաղթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընկերության կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար որպես նմանատիպ ներկայացվել են «Զանգված» ՍՊԸ-ի և ՀՀ

պաշտպանության նախարարության միջև 18.05.2016թ. կնքված թիվ «ՍԲԱՇՁԲ-10/5-1» ծածկագրով նախագծային աշխատանքների կատարման և «Զանգված» ՍՊԸ-ի և ՀՀ ոստիկանության միջև 13.12.2017թ. կնքված թիվ «ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՇՁԲ-2017-ՆԱԽ14» ծածկագրով պետական գնման պայմանագրերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.09.2019թ. նիստի թիվ 3-1 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ:

Ընկերությունը ծանուցվել է երեք աշխատանքային օրյա ժամկետում անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.09.2019թ. թիվ 3-2 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերում գնահատող հանձնաժողովի կողմից կրկին արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

18.05.2016թ. կնքված N ՍԲԱՇՁԲ-10/5-1 և 13.12.2017թ. կնքված N ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՇՁԲ-2017-ՆԱԽ14 պայմանագրերը չեն համապատասխանում հրավերի 2.5 կետով սահմանված նմանատիպ համարվող օբյեկտների ցանկին:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, մերժել է Ընկերության հայտը:

Այսպիսով՝ անդրադառնալով Ընկերության կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացված պայմանագրերի՝ հրավերի 2.5 կետով սահմանված նմանատիպ համարվող օբյեկտների ցանկին համապատասխան չլինելու հարցին, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ կառավարության 02.07.2009թ. «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և «Լիցենզավորման մասին» հայաստանի հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով հաստատված աղյուսակի 17-րդ բաժնի 2-րդ կետով նախատեսված այլ դեպքերի) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 777-Ն որոշման 6-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի ներդիրները տրամադրվում են ըստ հետևյալ ոլորտների՝

1) բնակելի, հասարակական և արտադրական.

2) տրանսպորտային.

3) հիդրոտեխնիկական.

4) էներգետիկ.

5) կապի:

Կարգի 65-րդ կետը սահմանում է, որ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: ***Ճանապարհաշինարարական աշխատանքների՝ ներառյալ դրանց իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների դեպքում տնտեսական գործունեության խմբերը սահմանվում են՝ հաշվի առնելով գնման առարկայի տեսակը, իսկ շինարարական ծրագրերի դեպքում՝ հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները***: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Տվյալ դեպքում գտնում եմ, որ Կարգի 65-րդ կետի համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության կողմից ներկայացված վերը նշված պայմանագրերի նմանատիպությունը պետք է գնահատեր ոչ թե հրավերում թվարկված նմանատիպ համարվող օբյեկտների տեսանկյունից, այլև հիմք ընդուներ քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները:

Ինչ վերաբերում է Ընթացակարգը չկայացած հայտարարելու Ընկերության պահանջին, ապա սույն մասով բողոքն ենթակա է մերժման, քանի որ Ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմքեր առկա չեն:

Ինչ վերաբերում է բողոքով ներկայացված՝ «Զանգված» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ պահանջին, ապա բողոք սույն մասով ևս ենթակա է մերժման,

քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն է որոշում գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից հայտնած այն դիրքորոշմանը, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքում առկա են մի շարք սխալներ, ապա այս առումով հայտնում եմ, որ նշված վրիպակներն արձանագրվել են նաև Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բողոքի ուսումնասիրության ընթացքում, սակայն գտնում եմ, որ դրանք չունեն էական նշանակություն, քանի որ բողոքով ներկայացված հիմնական հիմքը թույլ է տալիս արձանագրել գնահատող հանձնաժողովի գործողությունների գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից չբխելու փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Զանգված» ՍՊԸ-ի կողմից 03.10.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Զանգված» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:
2. Բողոքի պահանջը մյուս կետերի մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**